Արձանագրություն N 2-2

ՀՀՔԿ-ԷԱՃԱՊՁԲ-24/9 ծածկագրով համակարգիչներ ամբողջը մեկում և համակարգչի կոշտ սկավառակների ձեռքբերման գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան	14.01.2025թ. ժամը 11:30

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Տ. Ղուկասյան

Հանձնաժողովի անդամներ՝ Կ. Բարսեղյան

Գ. Խաչատրյան

Մ. Արշալույսյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Գ. Հակոբյան

Բացակայում էր հանձնաժողովի անդամ՝ Ա. Խաչատրյան

1. Գնման ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի հայտում արձանագրված անհամապատասխանությունների մասին

(Տ. Ղուկասյան)

1.1 Գնման ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի հայտով ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում պարզվել է հետևյալը՝

«Մոնիկ» ՍՊԸ

Ապրանքի ամբողջական նկարագրի մասով՝ տեխնիկական բնութագիրը հստակ չի նկարագրված (մասնավորապես՝ առնվազն, պետք է, բառերը և հրավերի բնութագրում նշված պարտադիր պայմանները անհրաժեշտ է հստակեցնել):

1.2 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետի պահանջները՝ գնահատող հանձնաժողովը որոշում է կասեցնել նիստը և ծանուցել «Մոնիկ» ՍՊԸ-ին մեկ աշխատանքային օրվա ընթացքում (մինչև 15.01.2025թ. ներառյալ) շտկել արձանագրված անհամապատասխանությունները: Սահմանված ժամկետում eauction.armeps.am էլեկտրոնային համակարգի միջոցով շտկումներ ներկայացվելու դեպքում, հայտը կգնահատվի բավարար, հակառակ դեպքում՝ այն կգնահատվի անբավարար և կմերժվի:

Ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ 0:

2. Գնման ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

(Տ. Ղուկասյան)

2.1 Գնման ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրվում է արձանագրված անհամապատասխանությունները մասնակցի կողմից շտկելուց հետո, բայց ոչ ուշ քան 16.01.2025թ. ժամը 11:30-ին ՀՀ քաղաքաշինության կոմիտեում, ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3, IV հարկ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ-4, դեմ-0:

Հանձնաժողովի Նախագահ՝ _____ Տ. Ղուկասյան

Անդամներ՝ _____ Կ. Բարսեղյան

_____ Գ. Խաչատրյան

_____ Մ. Արշալույսյան

Արձանագրությունը կազմեց հանձնաժողովի քարտուղար՝ _____ Գ. Հակոբյան